SCADA համակարգ

Եվրամիության INOGATE ծրագրի շրջանակներում Ընկերությունում ներդրված է SCADA համակարգի առաջին հերթը, որը հնարավորություն է տալիս արբանյակային կապի սարքավորումների օգտագործմամբ, ժամանակի իրական ռեժիմում ապահովել թվային, ձայնային և տեսատեղեկատվության փոխանցումը մայրուղային գազատարի հանգուցային կետերից Ընկերության Կենտրոնական կարգավարական վարչություն (ԿԿՎ):

Այսպիսի կապը հնարավորություն է ընձեռում.

- Ընկերության վերին մակարդակում լուծելու գազափոխադրման համակարգում բնական գազի հաշվեկշռի հետ կապված հարցերը,
- Տելեմետրական տեղեկատվության և հիդրավլիկական հաշվարկի արդյունքների համեմատության միջոցով հայտնաբերելու գազատարի վթարավտանգ հատվածները: